



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/17889/02/23
2025թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«13» փետրվարի 2025թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող
զեկուցող

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ս. ՄԵՂՐՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Վ. ՔՈԶԱՐՅԱՆ

քննարկելով ըստ Նարիս Նազլումյանի հայցի ընդդեմ Արգիշտի Ղահրամանյանի՝ գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու և վտարելու պահանջների մասին, ու ըստ Արգիշտի Ղահրամանյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Նարիս Նազլումյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, թիվ ԵԴ2/17889/02/23 քաղաքացիական գործի ենթակայության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

(Ա) Դիմելով դատարան՝ Նարիս Նազլումյանը պահանջել է Արգիշտի Ղահրամանյանի ապօրինի տիրապետումից հետ պահանջել իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ Երևանի Ա. Ահարոնյան փողոցի թիվ 16/3 հասցեում գտնվող անշարժ գույքը (այսուհետ՝ Անշարժ գույք), և Արգիշտի Ղահրամանյանին վտարել Անշարժ գույքից:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Արգիշտի Ղահրամանյանը պահանջել է ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքն Անշարժ գույքի նկատմամբ:

Սնանկության դատարանի 27.09.2023 թվականի վճռով «ԹԵՔՆՈ ՔԱԶԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ճանաչվել է սնանկ:

«Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Բանկ) ներկայացրել է 1.147.551,12 ԱՄՆ դոլարի և 8.742.224 ՀՀ դրամի չափով պահանջ, որը հիմնավորելու նպատակով Սնանկության դատարան, ի թիվս այլնի, ներկայացրել է նաև Անշարժ գույքի նկատմամբ գրավի գրանցման իրավունքի առկայության մասին տեղեկանքի և սեփականության իրավունքի վկայականի լուսապատճենները:

Սնանկության դատարանի 15.12.2023 թվականի որոշմամբ հաստատվել է պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը՝ Բանկի 1.147.551,12 ԱՄՆ դոլարի և 8.742.224 ՀՀ դրամի չափով պահանջը գրանցվել է որպես ապահովված պահանջ: Բանկի պահանջը՝ նաև Անշարժ գույքի գրավով ապահովված լինելու մասով, կասեցվել է մինչև այլ քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտ կայացնելը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.06.2024 թվականի որոշմամբ գրավատու Դավիդ Իսսայանի սնանկության գործով կառավարիչ Զավեն Վարդանյանի և գրավատու Նարիս Նազլումյանի վերաքննիչ բողոքները մերժվել են ու Սնանկության դատարանի 15.12.2023 թվականի ««ԹԵՔՆՈ ՔԱԶԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սնանկության գործով ներկայացված պահանջի նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունը մերժելու պահանջի մասով վարույթը կասեցնելու, պահանջների վերջնական ցուցակը հաստատելու և պարտատերերի առաջին ժողով նշանակելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 08.07.2024 թվականի որոշմամբ գրավատու Նարիս Նազլումյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Մ. Տաշչյանը 12.12.2024 թվականին որոշում է կայացրել սույն քաղաքացիական գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին՝ պատճառաբանելով, որ.

«Տվյալ դեպքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով վեճի առարկա հանդիսացող գույքը որպես պարտավորության կատարման ապահովման միջոց հանդիսանում է գրավի առարկա և տեղ է գտել թիվ ՍնԴ/2271/04/23 սնանկության գործով 15.12.2023 թվականի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշման մեջ, ուստի Դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացված պահանջը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի հիմքով պետք է քննվի թիվ ՍնԴ/2271/04/23 գործի շրջանակներում»:

Գործն ստացվել է Սնանկության դատարանում և 16.01.2025 թվականին հանձնվել է նույն դատարանի դատավոր Ա. Խաչատրյանին:

Սնանկության դատարանի դատավոր Ա. Խաչատրյանը, համաձայն չլինելով գործի ենթակայությանը, 27.01.2025 թվականին որոշում է կայացրել գործի ենթակայությունը որոշելու համար թիվ ԵԴ2/17889/02/23 քաղաքացիական գործը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին այն պատճառաբանությամբ, որ.

«Ուսումնասիրելով սույն գործի նյութերը՝ Դատարանն արձանագրում է, որ իրոք ՀՀ, ք.Երևան, Ա. Ահարոնյան փողոց, թիվ 16/3 հասցեում գտնվող անշարժ գույքը, որի առնչությամբ քննվում է սույն քաղաքացիական գործը, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի

1-ին մասով նախատեսված հիմքով ներառված է թիվ ՍնԴ/2271/04/23 սնանկության գործով Դատարանի կողմից 27.09.2023թ. սնանկ ճանաչված «Թեքնո ՔԱԶԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գույքի կազմում, քանի որ հանդիսանում է նշված ընկերության պարտավորությունների համար գրավադրված, երրորդ անձին պատկանող գույք: Սույն քաղաքացիական գործով հայցվոր Նարիս Վահիկի Նազլումյանը սկզբնական հայցով խնդրել է Արգիշտի Ռազմիկի Ղահրամանյանի ապօրինի տիրապետումից հետ պահանջել իրեն սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, ք. Երևան, Ա.Ահարոնյան փողոց, թիվ 16/3 հասցեում գտնվող անշարժ գույքը և վերջինիս վտարել նշված անշարժ գույքի հասցեից, իսկ հակընդդեմ հայցով հայցվոր Արգիշտի Ռազմիկի Ղահրամանյանը խնդրել է ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքը ՀՀ, ք. Երևան, Ա.Ահարոնյան փողոց, թիվ 16/3 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությունից բխում է, որ ՀՀ սնանկության դատարանի քննությանն են ենթակա այն քաղաքացիական գործերը, որոնք ոչ միայն ծագել են սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ, այլ նաև կարող են ազդել սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

Մինչդեռ Դատարանը գտնում է, որ սույն գործով թե՛ սկզբնական հայցով, թե՛ հակընդդեմ հայցով կայացվելիք վերջնական դատական ակտերը չեն կարող ազդել թիվ ՍնԴ/2271/04/23 սնանկության գործով Դատարանի 27.09.2023թ. սնանկ ճանաչված «Թեքնո ՔԱԶԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա, ուստի և տվյալ պարագայում առկա չեն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված անհրաժեշտ բոլոր պայմանները, որոնց առկայության դեպքում միայն քաղաքացիական գործի քննությունը ենթակա կլինի ՀՀ սնանկության դատարանին»:

Թիվ ԵԴ2/17889/02/23 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել և դատական կազմին է հանձնվել 06.02.2025 թվականին:

(Բ) Վճռաբեկ դատարանը, քննելով թիվ ԵԴ2/17889/02/23 քաղաքացիական գործի ենթակայության հարցը, արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ սնանկության դատարանից ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ

ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված դեպքերում դատավորը ենթակայության հարցի որոշման համար գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին կայացված որոշումը ուղարկում է գործին մասնակցող անձանց, որոնք այն ստանալու պահից եռօրյա ժամկետում կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

Վկայակոչված նորմերից հետևում է, որ գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը համաձայն չլինելու դեպքում յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու մասին՝ այդ որոշումն ուղարկելով գործին մասնակցող անձանց, որոնք այն ստանալու պահից՝ եռօրյա ժամկետում, կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործն ստանալու պահից՝ հնգօրյա ժամկետում, որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (...):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր): Նույն մասով սահմանված՝ պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած վեճը ենթակա է քննության սնանկության դատարանում որպես առանձին քաղաքացիական գործ՝ անկախ պարտապանի սնանկ ճանաչված լինելու հանգամանքից:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանից քաղաքացիական գործ ստանալու դեպքում դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ենթակայությունը: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիաիրավական վեճը սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործ ենթակա է քննության միայն հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1. քաղաքացիական գործով վեճը պետք է ծագած լինի՝

ա) կամ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների վերաբերյալ,

բ) կամ երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի վերաբերյալ,

գ) կամ պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ, անկախ պարտապանի սնանկ ճանաչված լինելու հանգամանքից, բացառությամբ սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացվող հայցերից կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերից:

2. նշված յուրաքանչյուր դեպքում քաղաքացիական գործով ծագած վեճը պետք է ազդեցություն ունենա սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

Ընդ որում, Սնանկության դատարանը, ընդհանուր իրավասության դատարանից ստանալով քաղաքացիական գործը, յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի կազմում ներառվում են պարտապանին պատկանող ցանկացած գույքը, ներառյալ՝ մտավոր սեփականության օբյեկտ կամ այլ գույքային իրավունքներ, ինչպես նաև ***երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկաները***: (...):

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապահովված են համարվում ապահովված իրավունքով ծանրաբեռնված պահանջները: Ապահովված պարտատերեր են համարվում ապահովված իրավունք ունեցող անձինք՝ այդ պահանջների մասով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225.1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովված իրավունքը օրենքի կամ պայմանագրի ուժով, ի ապահովումն պարտավորության կատարման, գույքի կամ գույքային իրավունքի կամ պարտավորական իրավունքի նկատմամբ պարտատիրոջ իրավունքն է:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի, բանկային հաշվի, դեպոզիտի (ավանդի), ինչպես նաև արժեթղթի գրավի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նույն օրենսգրքի 15-րդ գլխով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավի իրավունքը (այսուհետ՝ գրավը) գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավը լրացուցիչ (ակցեսոր) պարտավորություն է գրավառուի (պարտատիրոջ) հանդեպ գրավատուի (պարտապանի) հիմնական պարտավորության կատարման ապահովման համար:

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ նույն պարագրաֆում [ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Գրավի իրավունք» վերտառությամբ 15-րդ գլխի 1-ին «Ընդհանուր դրույթներ գրավի մասին» վերտառությամբ պարագրաֆ] պարունակվող գրավի մասին ընդհանուր կանոնները կիրառվում են հիփոթեքի նկատմամբ, եթե այլ կանոններ չեն սահմանված նույն գլխի հիփոթեքին վերաբերող պարագրաֆում:

Շարադրված նորմերի բովանդակությունից բխում է, որ պարտապանի գույքի կազմում ներառվում է նաև երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի, ներառյալ նաև՝ գրավի առարկան:

Վճռաբեկ դատարանը նախ հարկ է համարում ընդգծել, որ Սնանկության դատարանի դատավոր Ա. Խաչատրյանը, արձանագրելով, որ Անշարժ գույքը, որի կապակցությամբ քննվում է սույն քաղաքացիական գործը, ընդգրկված է պարտապան Ընկերության գույքի կազմում, գտել է, որ սույն քաղաքացիական գործով կայացվելիք վերջնական դատական ակտը չի կարող ազդել պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա՝ այդ կերպ չհամաձայնելով գործի ենթակայությանը, սակայն իր այդ եզրահանգումը չի պատճառաբանել և չի նշել նման եզրահանգման համար հիմք հանդիսացող որևէ հանգամանք:

Այդուհանդերձ քննարկելով ենթակայության հարցը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևյալին:

Տվյալ դեպքում սույն քաղաքացիական գործով հայցի և հակընդդեմ հայցի օբյեկտը սնանկ ճանաչված Ընկերության գույքի կազմում ներառված՝ ապահովված իրավունքի առարկա Անշարժ գույքն է:

Սույն քաղաքացիական գործի՝ թիվ ՍնԴ/2271/04/23 սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդեցության հարցը քննարկելիս Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցադրմանը, թե արդյո՞ք **ձեռքբերման վաղեմության ուժով** Անշարժ գույքի նկատմամբ Արգիշտի Ղահրամանյանի սեփականության իրավունքի ճանաչումը, այսինքն՝ Անշարժ գույքի սեփականատիրոջ հնարավոր փոփոխությունը կարող է ազդել գրավի իրավունքի վրա, թե՛ ոչ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունք ձեռք բերելիս անշարժ գույքի նկատմամբ ճանաչվում է դրա սեփականատեր չհանդիսացող այն անձի սեփականության իրավունքը, ով տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ անշարժ գույքը տիրապետում է որպես սեփական գույք: Այս դեպքում անշարժ գույքի նկատմամբ նախորդ սեփականատիրոջ

իրավունքը դադարում է և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված հիմքով ճանաչվում է այլ անձի սեփականության իրավունքը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունք ձեռք բերելը կարող է որոշակի առումով անշարժ գույքի նկատմամբ գրավի իրավունքի և պարտատերերի պահանջների բավարարման վրա ունենալ հնարավոր ազդեցություն:

Նկատի ունենալով, որ հիփոթեքին վերաբերող պարագրաֆում սահմանված չեն գրավի մասին նշված ընդհանուր կանոններից տարբերվող այլ հատուկ կարգավորումներ՝ շարադրված պատճառաբանությունները վերաբերում են նաև անշարժ գույքի գրավին (հիփոթեք):

(Գ) Սույն գործով Նարիս Նազլումյանը պահանջել է Արգիշտի Ղահրամանյանի ապօրինի տիրապետումից հետ պահանջել իրեն սեփականության իրավունքով պատկանող Անշարժ գույքը և Արգիշտի Ղահրամանյանին վտարել Անշարժ գույքից, իսկ հակընդդեմ հայցով Արգիշտի Ղահրամանյանը պահանջել է ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքն Անշարժ գույքի նկատմամբ:

Շարադրված իրավական մեկնաբանությունների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հակընդդեմ հայցի բավարարումը կարող է հանգեցնել Ընկերության գույքի կազմի հնարավոր նվազեցմանը, քանի որ սկզբնական՝ ձեռքբերման վաղեմության հիմքով Անշարժ գույքի նկատմամբ Արգիշտի Ղահրամանյանի կողմից սեփականության իրավունք ձեռք բերելը, ըստ էության, ազդում է գրավի իրավունքի իրավական ճակատագրի վրա, իսկ գրավի իրավունքի հնարավոր դադարեցումն էլ կարող է հանգեցնել Ընկերության գույքի նվազեցմանը:

Փաստերի նման դասավորության պայմաններում, ելնելով սնանկության վարույթում պարտատերերի պահանջների բավարարման գործընթացի արդյունավետությունն ապահովելու անհրաժեշտությունից՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն քաղաքացիական գործով Արգիշտի Ղահրամանյանի ներկայացրած պահանջն իր բնույթով համապատասխանում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջներին, քանի որ ծագել է սնանկ ճանաչված «Թեքնո ՔԱԶԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գույքի կազմում ներառված՝ ապահովված իրավունքի առարկայի վերաբերյալ, որի իրավական ճակատագրի վերաբերյալ սույն քաղաքացիական գործով կայացվելիք եզրափակիչ դատական ակտը՝ շարադրված պատճառաբանություններով, կարող է ազդեցություն ունենալ «Թեքնո ՔԱԶԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ2/17889/02/23 քաղաքացիական գործն ըստ Նարիս Նազլումյանի հայցի ընդդեմ Արգիշտի Ղահրամանյանի՝ սեփականության իրավունքով պատկանող գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու և վտարելու պահանջների մասին, և ըստ Արգիշտի Ղահրամանյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Նարիս Նազլումյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, ենթակա է Սնանկության դատարանի քննությանը:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ԵԴ2/17889/02/23 քաղաքացիական գործն ըստ Նարիս Նազլումյանի հայցի ընդդեմ Արգիշտի Ղահրամանյանի՝ սեփականության իրավունքով պատկանող գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու և վտարելու պահանջների մասին, և ըստ Արգիշտի Ղահրամանյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Նարիս Նազլումյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, ենթակա է Սնանկության դատարանի քննությանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող _____ **Գ. ՀԱԿՈԲՅԱՆ**

Զեկուցող _____ **Ա. ՄԿՐՏՉՅԱՆ**

_____ **Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ**

_____ **Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ**

_____ **Ս. ՄԵՂՐՅԱՆ**

_____ **Է. ՍԵՂՈՒԿՅԱՆ**

_____ **Վ. ՔՈՉԱՐՅԱՆ**